

ԲՈՒՋԱՆԴԱՐԱՆԻ ՄԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՆՈՐ ԱՆԱՅԱՆ

«Ձի վաչէ երկրորդն Մանուէլի, ձին զուլամր երթեալ, սպանանէր»
(Ծ խգ)¹:

1953 թ., երբ ՀՍՍՀ ԳԱ հրատարակութեամբ լույս տեսավ Փաւստոս Բուզանգի Պատմութիւնը՝ Մամիկոն Գեորգյանի ուսերեն թարգմանութեամբ, մենք այդ թարգմանութեանը նվիրեցինք ընդարձակ գրախոսութիւն, որը նախ, որոշ կրճատումով, տպագրվեց մամուլում² և հետո, ամբողջութեամբ, առանձին³:

Այդ գրախոսութեան մեջ առիթ էր եղել կանգ առնելու Փաւստոսի նաև վերոհիշյալ նախադասութեան այն աշխարհաբար թարգմանութեան վրա, որ կատարել է Ստեփան Մալխասյանը. «Որովհետև վաչեի ձին, քթանալով՝ նրան (վեր էր ձգում) սպանում էր»⁴:

Այս նախադասութեան մասին գրել էինք, որ Մալխասյանը, չկարողանալով կողմնորոշվել, թե այստեղ ինչի՞ հերթականութեան մասին է խոսքը. ուղղակի անտեսել է բնագրի «երկրորդն Մանուէլի» բառերը և, կանգ առնելով այս կետում Մալխասյանին նախորդող և հաջորդող ուրիշ թարգմանիչների ունեցած տարբերութիւնների վրա, հարցականորեն գրել էինք. «Արդո՞ք վաչեն Մամիկոնյան տան նահապետական իրավունքի ժառանգութեան տեսակետից էր Մանվելի երկրորդը և կամ սպարապետութեան պաշտոնի՞ տեսակետից, կամ թե՛ եղբայրների միջև հերթականութեան տեսակետից»⁵:

Հետագայում, սակայն, Փաւստոսի Պատմութեան ընձեռած ուրիշ տրվյալների միջոցով նկատեցինք, որ ավելորդ էր եղել ենթադրութիւնների դիմել՝ «երկրորդն Մանուէլի» բառերի բովանդակութիւնը հասկանալու համար: Խոսելով վարագրատ թագավորի կատարած զործերի մասին՝ Փաւստոսն ասում է, որ այն ժամանակ, երբ Մամիկոնյան տոհմի տանուտեր Մանվելը գերութեան մեջ էր Պարսկաստանում, նա Մանվելի փոխարեն այդ տոհմին տանուտեր-նահապետ էր կարգել վերոհիշյալ վաչե Մամիկոնյանին⁶: Իսկ

¹ «Փաւստոսի Բուզանգացու Պատմութիւն Հայոց ի շորս գպրութիւնս», Վենետիկ, 1832, էջ 255:

² Հ. Ս. Ա ն ա ս յ ա ն, Փաւստոս Բուզանգի Հայոց պատմութեան ուսերեն թարգմանութիւնը, «Տեղեկագիր» (ՀՍՍՌ Գիտութիւնների ակադեմիայի), հաս. դիտ., 1954, № 12, էջ 89—102:

³ Կրճատումները կատարված էին խմբագրութեան կողմից, այդ պատճառով ստիպված էինք կատարել հաջորդ՝ ապակետիպ հրատարակութիւնը:

⁴ Հ. Ս. Ա ն ա ս յ ա ն, Բուզանգարանի ուսերեն թարգմանութիւնը (գրախոսութիւն), Չնագրի իրավունքով: Երևան, Ժող. ստեղծագործութեան տան ապակետիպ, 1954, 28 էջ:

⁵ «Փաւստոս Բուզանգ. Հայոց պատմութիւն», թարգմանութիւն, ներածութիւն և ծանոթութիւններ Ստ. Մալխասյանցի, Երևան, 1947, էջ 290:

⁶ Հ. Ս. Ա ն ա ս յ ա ն, Բուզանգարանի ուսերեն թարգմանութիւնը, էջ 17—18: Գրախոսութեան այս մասը կրճատված էր «Տեղեկագիր» հրատարակութեան մեջ:

⁷ «Փաւստոսի Բուզանգացու Պատմութիւն Հայոց», էջ 238:

երբ Մանվելը վերադարձել էր գերությունից՝ Վաչեն իր իշխանությունը նրան էր հանձնել և ինքը դարձել նրա երկրորդը: Փավստոսը գրում է. «Եւ եղեւ իբրեւ եկն եհասս յերկիրն Հայոց Մանուէլ եղբարբն իւրով Կոմսիւ հանդերձ, իբրեւ ետես զնա Վաչէն՝ որ յառաջն էր լեալ նահապետ, մինչ շեւ եկեալ էր ի նա՝ ետ ցնա զպատիւ իշխանութեանն, զոր առեալ էր ի թագաւորէն Վարադդատայ. քանզի նա էր երէց յազգին, եւ Մանուէլն ունէր զնահապետութեան ազգին տանուտէրութեան պատուին. եւ Վաչէն լինէր երկրորդ»⁷:

Ըստ այսմ՝ Վաչեն Մամիկոնյան նախարարական տոհմի նահապետական իրավունքի առումով էր Մանվելի երկրորդը, և այսպես էլ, հետագայում, երբ Փավստոսը նրա մահվան առթիվ նորից է հիշատակում նույն Վաչեին, բառացի կրկնում է «երկրորդն Մանուէլի» բառերը:

Փավստոսի Պատմության գերմաներենի թարգմանիչ Մ. Լաուերն ընկալել է այս նույնությունը և երկու դեպքում էլ պահել նույն արտահայտությունը՝ հաստատելով երկու վկայությունների կապակցությունը, առաջին դեպքում՝ «Watsche wurde der Zweite» (Վաչեն դարձավ երկրորդը)⁸, երկրորդ դեպքում՝ «Watsche, der Zweite nach Manuel» (Վաչեն՝ Մանվելից հետո երկրորդը)⁹:

Ֆրանսերենի թարգմանիչ Մկրտիչ էմինն առաջին դեպքում թարգմանել է՝ «Vatche resta le second» (Վաչեն դարձավ երկրորդը)¹⁰, բայց երկրորդ դեպքում թողել է second բառը և գրել. «le lieutenant de Manuel» (Մանվելի տեղակալը)¹¹: Ճիշտ է, որ lieutenant բառն ընդհանրապես նշանակում է նաև փոխարինող կամ երկրորդող, բայց գերազանցապես զինվորական առում է ենթադրել տալիս և ընթերցողին մղում է մտածելու, որ էմինն այստեղ, ըստ երևույթին, second բառը lieutenant բառով փոխարինելու համար նկատի է ունեցել և այն, որ Մանվել Մամիկոնյանը, որի երկրորդն էր Վաչեն, ոչ միայն Մամիկոնյանների նահապետն էր, այլև, միաժամանակ, Հայաստանի զինված ուժերի ընդհանուր հրամանատարը, որովհետև, ըստ Փավստոսի տված տեղեկությունների, թեև Վարազդատ թագավորը մի ժամանակ Բատ Սահառունուն էր տվել այդ պաշտոնը¹², բայց հետո Մանվելը նրանից խլել էր այդ. «Իսկ յորժամ եհասս եկաց Մանուէլն ի փառս տէրութեան իւրոյ (իր տոհմի նահապետական իրավունքին տիրացավ—Ն. Ա.), նախ առանց հրամանի թագաւորին Վարազդատայ յինքն յափշտակեաց զզօրավարութեանն զսպարապետութիւն»¹³: Եթե էմինն այս հանգամանքների բերմամբ Վաչեին համարել էր նաև սպարապետության մեջ երկրորդ և դրա համար էլ second բառը փոխարինել էր lieutenant-ով, շէր սխալվում:

⁷ Նույն տեղում, էջ 239—240:

⁸ Մ. Լաուեր (= „Des Faustus von Byzanz Geschichte Armentens. Aus dem Armenischen übersetzt... von Dr. M. Lauer“, Köln, 1879), էջ 193:

⁹ Նույն տեղում, էջ 205:

¹⁰ Մ. էմին. (= „Faustus de Byzance. Bibliotheque historique en quatre livres, traduite pour la premiere fois de l'armenien en français par Jean-Baptiste Emine“, հետևյալ հրատարակության մեջ. „Collection des historiens anciens et modernes de l'Arménie, publiée en français... par Victor Langlois“, t. I, Paris, 1867), էջ 299:

¹¹ Նույն տեղում, էջ 305:

¹² Փավստոսի Բուզանդատյ Պատմություն Հայոց», էջ 238:

¹³ Նույն տեղում, էջ 240:

Ռուսերենի թարգմանիչ Մ. Գևորգյանի մոտ լիովին չբացել է կապը փավաստոսյան երկու վկայությունների միջև: Առաջին դեպքում Փավաստոսի բացահայտ խոսքերն անխուսափելիորեն ճիշտ են թարգմանվել. «и Ваче стал вторым» (և Վաչեն դարձավ երկրորդը)¹⁴. բայց երկրորդ դեպքում թարգմանիչն առանց որևէ հիմքի ենթադրել է, որ խոսքը եղբայրության մասին է և գրել. «второй брат Манвела» (Մանվելի երկրորդ եղբայրը)¹⁵, մինչդեռ չէր կարող խոսք լինել եղբայրության մասին, որովհետև Փավաստոսն ինքը, մինչև այդ, բացահայտ կերպով ասում է, որ Վաչեն և Մանվելը Մամիկոնյան տոհմի տարբեր թևերին էին պատկանում¹⁶:

Ուստի և, համենայն դեպս, այս կետում Մալխասյանի թարգմանությունը, որ նշեցինք վերևում, թերի է, քանի որ նա նախադասությունից գուրս է թողել «երկրորդն Մանուէլի» բառերն այն պատճառով, որ չի նկատել Փավաստոսի երկու վկայությունների միջև եղած կապը:

Որպես վրիպում՝ Մալխասյանի մոտ ավելի ուշագրավ է այն, որ Փավաստոսի «զուլամբ երթեալ»-ը թարգմանված է՝ քթափառելով: Այդ վրիպման վրա ուշադրություն էր դարձրել Վարազ Առաքելյանը¹⁷ հետևելով ՆՀԲ-ին¹⁸ և «Արմատական բառարան»-ին¹⁹, ըստ որում պետք էր թարգմանել՝ «վզի վրա գլորվելով»: Հետևելով Մալխասյանին, ինչպես դիտել էինք տվել մենք, սխալվել էր նաև Մ. Գևորգյանը, գրելով, որ ձին «опрокинул его через голову» (նրան գլխով գետին տապալեց)²⁰:

Ըստ երևույթին Մալխասյանը «զուլամբ երթեալ»-ը պատկերացրել է որպես վզով շուռ գալ կամ վիզը շուռ տալ դեպի ետ, որից հետո՝ մնացածը նա ենթադրել է՝ քթով փառվածել, քթափառել: Մակայն, ինչպես էլ առաջացած ինի, այս վրիպումն արդարացման տեղ չունի:

Իսկ ի՞նչ է ասում հաջորդ՝ «սպանանէր» բառը:

Մալխասյանի ընկալմամբ սպանուցէր-ը նշանակում է սպանում էր (ստորագյալ, ներգործական բայ), սպանողը՝ Վաչեի ձին է (ենթակա), իսկ սպանվողը՝ Վաչեն (ուղիղ խնդիր): Կապակցությունն այս ձևով ընկալելով՝ Մալխասյանը թարգմանել է. «Վաչեի ձին... նրան (Վաչեին) վեր էր ձգում և սպանում էր», առանց հաշվի առնելու, որ, այսպիսի մեկնության դեպքում, ուղիղ խնդիրը գրաբարում պետք է անպայման ունենար հայցականի զ նախդիրը (զՎաչէ): Նույնիսկ միայն այս հանգամանքը ցույց էր տալիս, որ տվյալ նախադասության քերականական վերլուծության ուղին չէր կարող այդ լինել:

14 Մ. Գևորգյան (—«История Армении Фавстоса Бузанда. Перевод с дрезнеармянского и комментарий М. А. Геворкяна», Ереван, 1953), էջ 184:

15 Նույն տեղում, էջ 195:

16 Հմմտ. «Փավաստոսի Բուզանդացու Պատմութիւն Հայոց», էջ 238—239:

17 Վարազ Առաքելյան, Փավաստոս Բուզանդի աշխարհաբար թարգմանությունը, «Աղյատությունների ժողովածու» (ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտի), հ. Գ, Երևան, 1948, էջ 321:

18 «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. Բ, Վենետիկ, 1837, էջ 541:

19 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Ե, Երևան, 1931, էջ 617—618:

20 Մ. Գևորգյան, էջ 195:

Բուզանդարանի այս նախադասությունն ունի քերականական ճշգրիտ կառուցվածք:

«Ձի Վաչէ երկրորդն Մանուէլի, ձին գուլամը երթեալ, սպանանէր»:

Պետք էր ուշադրության առնել, որ այստեղ Բուզանդարանի բանիմաց հրատարակիչներն իրենք իսկ, ստորակետերով անջատելով «ձին գուլամը երթեալ» բառերը՝ իբրև ստորոգյալի լրացում (ձևի պարագա, դերբայական դարձված), արդեն փաստորեն մատնացույց էին արել նախադասության քերականական վերլուծության ուղին. «Ձի Վաչէ երկրորդն Մանուէլի... սպանանէր», այսինքն՝ ենթակա (Վաչէ) և ստորոգյալ (սպանանէր): Հրատարակիչների այս ցուցումն անվրեպ հասկանալու համար բավական էր նկատի ունենալ, որ հին հայերենի ներգործական բայերն անցյալ անկատար ժամանակում, ենթակայի կրավորական գործողության ենթարկվելու դեպքում, կիրառվում են նաև կրավորական իմաստով՝ առանց ձևի տարբերակման. հետևաբար սպանանէր-ը կարող է նշանակել թե՛ սպանում էր (ներգործական), թե՛ սպանվում էր (կրավորական). և հենց այդ դեպքին է, որ ներկա ենք այստեղ և դրա անտեսմամբ է, որ Մալխասյանն ստիպված է եղել շուրուժուժ տալ Փավստոսի նախադասությունը և իսկական ենթակային՝ Վաչին դարձնել ուղիղ խնդիր:

Հարկ էր տվյալ նախադասությունը թարգմանել այսպես.

«Ռոսվնեաւ Վաչեն՝ Մանվելի երկրորդը սպանվում էր (=մեռնում էր) այնու, որ [ևրա] ձին գլորվում էր վզի վրա»:

Պետք է ավելացնել, որ լատներն ու էմինը ճիշտ էին մատնացույց արել ենթական (Վաչե), բայց «գուլամը երթեալ»-ի թարգմանությունը շատ էր տուժել նրանց գրչի տակ: Առաջինը գրել էր. «Watsche, der Zweite nach Manuel, wurde getödtet, indem ein Pferd ihm auf den Hals trat» (Վաչեն Մանվելից հետո երկրորդը, սպանվեց, այնու, որ մի ձի նրա վզի վրա կոխեց):²¹ Երկրորդը գրել էր. Vatché, qui était le lieutenant de Manuel, périt écrasé par son cheval» (Վաչեն, որը Մանվելի տեղակալն էր, մեռավ՝ ջախջախվելով իր ձիու տակ)²², Հետագայում Վարագ Առաքելյանը ևս նկատել էր, որ ենթական պետք է Վաչեն եղած լինի, բայց, միաժամանակ, հակում էր ցույց տվել նաև, բնագիրը սրբագրության ենթարկելու միջոցով, Վաչին զ նախդրով օժտելու և դարձնելու ուղիղ խնդիր, և, նրա փոխարեն, ձիուն դարձնելու ենթակա: Նա գրում էր. «Պետք է թարգմանել՝ որովնեաւ Վաչեն՝ Մանվելի երկրորդը սպանվեց՝ ձին վզի վրա գլորվելով կամ գլխիվայր գալով. եթե բնագիրը չենք ուղղում. գՎաչէ՝ գերկրորդն Մանուէլի՝ ձին գուլամը երթեալ սպանանէր»²³:

Բուզանդարանի տվյալ նախադասության կառուցվածքը քերականորեն շատ պարզ է և ըստ ամենայնի անթերի, ուստի և հարկ է այն թարգմանել պարզ բնական ձևով, առանց արհեստականությունների:

21 Մ. Լ ա ու ե ռ, էջ 205:

22 Մ. է մ ի ն, էջ 305:

23 Վ ա ռ ա գ Ա ա ք ե լ յ ա ն, էջ 321:

ОБ ОДНОМ ПРЕДЛОЖЕНИИ БУЗАНДАРАНА

АКОП АНАСЯН

Резюме

В одном предложении армянского историка IV в. Фавста Бузанда говорится о том, что Ваче, принадлежавший к княжескому роду Мамиконидов и являвшийся «вторым Манвела», был убит (умер) в сражении с персами: его конь упал, перевернувшись вниз головой. В немецком и французском переводах «Истории» Бузанда это предложение было передано в несколько искаженной форме, однако сохранило свою грамматическую структуру. А в переводе на современный армянский и русский языки грамматическая структура предложения была полностью нарушена, в силу чего Ваче, который в рассматриваемом предложении является подлежащим, выступает как прямое дополнение, а конь, перевернувшийся вниз головой и являющийся дополнением к сказуемому — как подлежащее. Вместе с тем сказуемое предложения из страдательного залога перешло в действительный. Эти грамматические нарушения, допущенные в переводе Ст. Малхасяна, приняли более искаженную форму в русском переводе М. Геворкяна: «Ибо конь Ваче, второго брата Манвела, опрокинул его через голову и убил». Кроме того, «второй Манвела» нельзя интерпретировать как «второй брат Манвела», ибо сведение, подчеркнутое из другой части «Истории» Бузанда, указывает на то, что Ваче и Манвел не были братьями и принадлежали к разным ветвям рода Мамиконидов.